ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Հնագույն շրջանի մշակույթը Հայկական լեռնաշխարհում

Հետազոտող ուսուցիչ՝ Սեդա Ավետիսյան

Երևանի Յակոբ և Լուտովիկա Այնթապլեանների անվան
հ. 87 միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ.....4

1.1 Հնագույն քարայր-կացարաններ: Հին Խնձորեսկ 4

1.2.Դամբարաններ 8

1.3. Մեգալիթյան հուշարձաններ: Մենհիրներ 10

1.4. Ժայռապատկերներ.....18

1.5.Հնագույն կառույցներն ու հնավայրերը Հայաստանում: Զորաց Քարեր.....24

ԳԼՈՒԽ 2. ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 31

2.1 Հավատալիքներ 31

2.2 Ծեսեր 33

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....38

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....41

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայությունը մի գետ է, որի ջրերը ոռոգում են ոչ միայն իր հարազատ հողն ու անդաստանը, այլև թավալում են հուժկու ալիքներ դեպի ընդհանուր քաղաքակրթության օվկիանոս»:

Ն. Ադոնց

Աշխատանքում ներկայացվում է Հայկական լեռնաշխարհի հնագույն շրջանի նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը, դրա թողած հետքն ու ազդեցությունը ներկայիս մշակույթի վրա:

Վաղընջական ժամանակներից Հայկական լեռնաշխարհում բնակվել են տարբեր ցեղախմբեր՝ հայերի հեռավոր նախնիները, թողնելով պալեոլիթի, մեզոլիթի, նեոլիթի, էնոլիթի, բրոնզի ու երկաթի վաղագույն դարաշրջանների բազմաթիվ հուշարձաններ՝ ոսկրե, քարե ու մետաղե գործիքներ, զենքեր, հնագույն բնակատեղիներ ու կացարաններ, կարասային ու քարարկղային դամբարաններ, մեծակերտ հուշարձանների խմբին պատկանող մեհիրներ, կրոմլեխներ ու դոլմեններ, պաշտամունքային այլևայլ կոթողներ:

Հայկական լեռնաշխարհը հայ ժողովրդի և հայկական հնագույն քաղաքակրթության բնօրրան է: Դեռևս անհիշելի ժամանակներից մեր նախնիները ապրել ու արարել են այստեղ և ստեղծել մարդկային ստեղծագործ մտքի ու քանքարի բազում դրսևորումներ: Հայկական լեռնաշխարհում ստեղծվել են տարաբնույթ ու տարատեսակ արժեքներ, որոնք մեր նկարագրի ու տեսակի դրսևորումներն են, ինչն էլ օգտագործելով զբոսաշրջությունում հնարավոր կլինի ներկայացնել այդ մշակույթն, ապահովել ճանաչողություն և արժևորում համաշխարհային մշակութային գանձարանում:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հայկական մշակույթը հնագույն շրջանում, հնագույն մարդու պատկերացումները երկրի մասին, նրանց ապրելակերպը, զարգացումը հազարամյակների ընթացքում և այդ ամենի թողած ազդեցությունը մեր ներկայիս մշակույթի վրա: Նպատակներից մեկն է նաև ներկայացնել հնագույն շրջանից ներկայումս պահպանված արժեքները և գրավել զբոսաշրջիկներին, ինչի արդյունքում էլ հնարավոր կլինի օգտագործելով դրանք առաջարկել զբոսաշրջային ծառայություններ ու հետաքրքիր թեմատիկ երթուղիներ:

ԳԼՈՒԽ 1.ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1.1 Հնագույն քարայր-կացարաններ: Հին Խնձորեսկ

Հին Խնձորեսկը պետք է պահել և պաշտպանել,
որպես հնությունների խոշորագույն թանգարան,
այդպիսի հրաշքային տեղ աշխարհում քիչ կա:
Մարտիրոս Սարյան

Սյունիքի մարզի Գորիս քաղաքից 15 կմ հյուսիս-արևելք՝ ծովի մակարդակից 1580 մ բարձրությամբ, Զանգեզուրյան բնության հրաժալիքն է՝քարանձավային Հին Խնձորեսկը: Հեռավորությունը Երևանից 265 կմ է: Ըստ ժողովրդական ստուգաբանության ՝Խնձորեսկ՝ անվան արմատը ՝խնձոր՝ բառն է: Մեկ այլ ստուգաբանությամբ՝ Խնձորեսկը նախապես անվանվել է Խորձոր կամ Խորձորեսկ, որը հետագայում որոշ հնչյունափոխության ենթարկվելով՝ ընդունել է ներկայիս ձևը: Երկու կարծիքներն էլ, անշուշտ, ընդունելի են, այստեղ և՛ ձորերն են խոր, և՛ խնձորն է առատ: Մարդիկ այստեղ բնակվել են նախապատմական ժամանակներից: Հին Խնձորեսկի քարանձավների առաջին բնակիչները զբաղվել են որսորդությամբ, անասնապահությամբ, հողագործությամբ, ամենատարբեր արհեստներով: Զառիթափ լանջերին հարյուրավոր բրգաձև քարատակեր ընկած են մոտ 3 կմ, միջինը 100-120 մ բարձրությամբ լանջերի միջև: Մարդիկ ժայռերի մեջ բացել են դռներ և երդիկներ, որոշ քարանձավների պատերը հարթեցվել են և հղկվել են կավով: Յուրաքանչյուր կացարան միջանցքով բաժանված է երկու մասի, մեկում բնակվել են մարդիկ, մյուսում՝ ընտանի կենդանիները: Տեղանքն անհարմար է եղել շինարարական աշխատանքների համար, հետևաբար մարդիկ կառուցել են լանջերն ի վեր, ձգվող գետնից 20-30 մ բարձրության դարավանդներ, որոնց վրա դասավորված խմբային կացարաններից մեկի տանիքը

մյուսի բակն էր: Բազմահարկ քարատակերով տեղափոխվելու համար օգտագործվել են պարանագործ սանդուղքներ, որոնց ծայրերը կապել են առաջին հարկի կացարանների մուտքերից: Կացարանների լուսավորությունը միայն մուտքի բացվածքից էր, քանի որ անձավները չէին կարող ունենալ պատուհաններ: Քարանձավներում մինչ օրս պահպանվել են փորված քարե նստարաններ, ամբարներ, դարակներ, կացարանների հատակներին՝ ուղղանկյուն ջրհավաք փոսեր, իսկ գոմերում՝ անասունների մսուրներ: Խնձորեսկում մարդիկ բնակություն են հաստատել անհիշելի ժամանակներից: Գյուղում հայտնաբերվել է սպիտակ ժայռ կոչվող հեթանոսական մեհյանը՝ ծիսակատարությունների հետքերով: Պատմիչները վկայում են, որ Քրիստոնեության մուտքը Խնձորեսկ եղել է մեծ դժվարություններով, քանի որ այնտեղ և, առհասարակ, ողջ Սյունիքում միշտ ուժեղ են եղել հեթանոսական ավանդույթները: Տեղացիների մոտ աղոթելն ու մկրտությունը ընդունված չի եղել: Միայն 1665թ. գյուղում կառուցվել է Ս. Հռիփսիմե եկեղեցին, որը ենթարկվել է Տաթևի միաբանությանը: Ապա քրիստոնեական հավաքին դարձած բնակչությունը կառուցում է ևս երեք եկեղեցիներ՝ Ս. Թադևոս ժայռափոր մատուռը, Անապատ եկեղեցին և Խնձորեսկ գետի ձախ ափի հնագույն տաճարը, որը կոչվում է Հին:

Թավրիզում մեծ հռչակ են վայելել հատկապես Խնձորեսկի աշուղ-գուսանները: Աբրահամ Կրետացին հիշատակում է նաև, որ Խնձորեսկում շատերն են գորգ և կարպետ գործել: Ժամանակի ընթացքում հուսալի ապաստարանի բնակչության թիվը կտրուկ աճում է, քանի որ մարդիկ, լսելով որ Խնձորեսկում հարկեր չեն վճարում, հոծ բազմությամբ եկել և բնակվել են այստեղ:

Հին Խնձորեսկը բազմաբնակ քարանձավային բնակավայր էր մինչև 1958թ: Հին Խնձորեսկի քարանձավներից վերջին բնակիչները հեռացան 1969թ: 1950-ականներից սկսվում են Նոր Խնձորեսկ Գյուղի շինարարությունը, անցկացվում են ջրատարներ, կառուցվում են բնակարանային շենքեր:

Խնձորեսկը 18-րդ դարի 20-30-ական թթ. Սյունյաց ազգային-ազատագրական պայքարի պատմության առանցքային վայրերից է: 1722-1730թթ. հայոց պատմության մեջ նշանավորվում են ընդդեմ թուրք-պարսկական տիրապետության Սյունիքի և Արցախի ազատագրական պայքարով: Մարտերում իր հետաքրքիր պատմությունն ու կարևոր դերակատարումն ունի Խնձորեսկի բերդը՝ որպես Դավիթ Բեկի և Մխիթար

Սպարապետի մաքառման ամուր ամրոց: Սյունյաց ազատամարտին սկիզբ դրեց և այն գլխավորեց ազգային հերոս Դավիթ Բեկը, որի մահից հետո, 1728թ. պայքարի առաջնորդ է ընտրվում իր ռազմավարական հմտություններով, հերոսական խիզախումներով և վառ անհատականությամբ աչքի ընկնող Մխիթար Սպարապետը: Խնձորեսկ գետի ձախ ափին Անապատ կոչվող վայրում, Մխիթար Սպարապետի գերեզմանն է՝ Հին Խնձորեսկի եկեղեցու հյուսիսային պատի տակ:

Արենի-1 քարանձավ

Արենի-1 քարանձավային համալիրը գտնվում է ՀՀ Վայոց Ձոր մարզի Արենի գյուղում՝ Արփա գետի ափին:

Արենի–1 քարանձավում պեղումներ են սկսվել 2007 թվականին: Պեղումներն իրականացվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կողմից Կալիֆորնիայի համալսարանին առընթեր Լոս Անջելեսի հնագիտության ինստիտուտի (UCLA's Cotsen) և Քորքի համալսարանի (Իռլանդիա) հետ համատեղ: Այս տարիների ընթացքում հայտնաբերվել է, ուշ նեոլիթի ժամանակաշրջանի մեր նախնիների նյութական և հոգևոր մշակույթի մասին վկայող ֆակտոլոգիական ծավալուն նյութ:

Արենիի քարայրը բաղկացած է ժամանակավոր բնակատեղիից և պահոցից: Պահոցային մասում գտնվել է գինեգործության համալիր, որտեղ, շնորհիվ քարայրի ներքին անփոփոխ ջերմաստիճանի, մինչև այժմ էլ պահպանվել են խաղողի մնացորդները: Նույնիսկ 6000 տարի առաջ մարդիկ հյութ կամ գինի խմելիս օգտագործել են ձողիկներ, սակայն, ի տարբերություն այժմյան ձևավոր տարբերակների, նրանք եղեգից են պատրաստված եղել:

Քարայրի պահոցային մասում տակառներից մի քանիսում, բացի հացահատիկեղենից և պտուղներից, գտնվել են 12-14 տարեկան աղջիկների գանգեր, որոնցից մեկում անգամ պահպանվել է գլխուղեղը: Հետազոտության համաձայն,

բոլորն էլ մահացել են հարվածից: Այս ամենը մասնագետներին տեղիք է տալիս ենթադրել, որ վերը նշվածը որևէ ծիսակատարության խորհուրդ է կրել:

Կոշիկը, որ Արենի գյուղի քարանձավներից մեկում գտնվել է դեռ 2008-ի սեպտեմբերին, ավելի քան 5500 տարվա պատմություն ունի. այն իր տարիքով մոտ 1000 տարով գերազանցում է եգիպտական բուրգերին և 400 տարով հին է Քարահունջից: Կոշիկը թվագրվում է Ք.ա. 3600-3500 թվականներին: Կոշիկի փոքր չափսը ենթադրվում է, որ կանացի է, թեև գիտնականների հավաստմամբ, այդ դարաշրջանում փոքր չափսի ոտնաման կարող էր կրել նաեւ արական սեռի ներկայացուցիչը: Ոտնամանի լավ պահպանմանը նպաստել են սառը եւ չոր եղանակային պայմանները: Բացի այդ, քարանձավի հատակը պատված է եղել ոչխարի կաշվով ու գոմաղբի հաստ շերտով, ինչը նույնպես պաշտպանիչ դեր է կատարել: Կոշիկը պատրաստված է, ամենայն հավանականությամբ, կովի կաշվի ամբողջական կտորից և այն ամբողջական կաշվից պատրաստված միակ հնագույն նմուշն է ողջ աշխարհում: Այժմ նմուշը գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում:

2010թ.-ին Վայոց ձորի մարզի «Արենի-1» քարանձավում անցկացված պեղումների արդյունքում ավելի քան 5900 տարեկան կանացի ծղոտե շրջազգեստ է հայտնեբերվել: Կանացի հագուստը թվագրվում է Ք.ա. 39-րդ դարին: Առայժմ հայտնաբերվել են կիսաշրջազգեստի մասերը, որոնք, կարելի է ասել, հրաշալի են պահպանվել: Հրաշալի գործվածք է՝ ռիթմիկ գունային երանգներով: Ծղոտե գործվածքների այլ մնացորդներ ևս հայտնաբերվել են: Քարանձավից հայտնաբերվել է նաև մեծ քանակությամբ գործվածքեղեն: Ընդ որում, կտորների նմուշները ևս բավականին լավ վիճակում են պահպանվել, նույնիսկ դրանց գույներն են երևում: Նույն քարանձավում էր հայտնաբերվել նաև աշխարհում ամենահին գինու հնձանը:

Արենի-1 քարայրի լրացուցիչ հայտնագործությունները ներառում են մետաղյա դանակներ, ավելի քան 30 տեսակի մրգերի սերմեր, հացահատկի տասնյակ տեսակների մնացորդներ, պարան, հագուստ, ծղոտ, խոտ, եղեգն և չորացած խաղող ու սալոր:

Ուշագրավ է, որ գտածոների զգալի մասը շարունակում է մնալ քարանձավում, քանի որ այնտեղ տիրող միկրոկլիմայի շնորհիվ արտեֆակտերը պահպանվում են գրեթե նախասկզբնական տեսքով:

1.2.Դամբարաններ

Դամբարանները ստորգետնյա կամ վերգետնյա կառույցներ են, որոնք ամփոփում են հանգուցյալի զմռսած աճյունը կամ գերեզմանը: Դամբարանի նպատակն էր հավերժացնել անհատի (խմբի, ամբողջ տոհմի) հիշատակը, գեղարվեստական արտահայտչամիջոցներով փառաբանել նրա գործունեությունը: Դամբարանները թաղման ծեսի հետ կապված հուշարձաններ են , որոնք կազմում են հնագույն ժամանակաշրջանի նյութական մշակույթի մի առանձին խումբ և բազմապիսի են իրենց ձևերով: Դրանցից առանձնապես ուշագրավ են այնպիսիք, որոնք կառուցելակերպի առումով ունեն որոշակի ընդհանրություն: Այդ տեսակետից ուշագրավ են Սևանի ափերին (Լճաշեն, Ցամաքաբերդ, Ծովազարդ (Մուխան)), Լոռի-բերդի և Մեծամորի հնավայրերում պեղված դամբարանները: Ոչ մեծ չափերի, քառանկյունի կամ սեղանակերպ հատակագծով այդ դամբարանների պատերը կառուցված են ուղղաձիգ դրված, իսկ ծածկերը կողք-կողքի շարված 3-4 մեծաչափ, անմշակ քարասալերով: Ի տարբերություն դրանց, Լճաշենի և Վանաձորի որոշ դամբարաններում ծածկերը կատարվել են նաև փայտանյութերով:

Առաջին թաղումները եղել են պալեոլիթի շրջանում: Թաղումը հիմնականում սովորույթ է դարձել մեզեոլիթի շրջանում: Քարի դարում եղել են հողադամբարաններ (հողածածկ արհեստական բլուրներ), դոլմեններ, կրոմլեխներ, բրոնզի դարում քարարկղային դամբարաններ, դամբարանաբլուրներ, թաղման համար հատուկ օթյակներ և այլն: Բրոնզի դարում ցեղային առաջնորդներին հիմնականում թաղել են սայլերի և կառքերի հետ: Արթիկի բրոնզեդարյան դամբարանադաշտում պեղվել են

տուֆաքարի մեջ փորված շատ դամբարաններ: Ք.ա. 1-ին հազարմյակի դամբարաններում կատարվել են կարասային թաղումներ, իսկ անտիկ շրջանում շատ վայրերում հանգուցյալին թաղել են տարբեր ձևի կավե դագաղներում:

Դամբարանաբլուրը հողե կամ քարե արհեստական բլուր է դամբարանի վրա: Հայտնի են դեռևս Ք.ա. 4-3-րդ հազարամյակներից: Լինում են կլոր, երբեմն՝ ձվաձև կամ քառանկյուն հիմքերով: Դամբարանաբլուրներում հանդիպում են քարե, փայտե, կավածեփ կամ աղյուսե պատերով տարբեր տիպի կառույցներ: Հանգուցյալի հետ հաճախ դրվել են ամաններ, սնունդ, զենքեր, զարդեր, գործիքներ, այլ առարկաներ: Հարուստների հետ երբեմն թաղել են նրանց կանանց, ստրուկներին, ձիերին: Բացի հիմնական թաղումներից, նույն տեղում ավելի ուշ կատարվել են նոր թաղումներ: Դամբարանաբլուրները սովորաբար լինում են առանձին, երբեմն նաև հոծ խմբերով ընդգրկելով նույնիսկ մինչև 3000 թումբ: Հայաստանի տարածքում կան բազմաթիվ դամբարանաբլուրներ (Լճաշեն, Վանաձոր և այլն), որտեղ հայտնաբերված նյութերը կարևոր նշանակություն ունեն Հայկական լեռնաշխարհի բրոնզի և երկաթի դարերի մշակույթն ուսումնասիրելու համար: Դրանք մեծ մասամբ քարակույտով ծածկված տարբեր բարձրության հողաթմբեր են, որտեղ հաղիպում են առանձին, խմբակային, մեկկարասյան, երկկարասյան թաղումներ:

Ե. Լալայանը Գավառի շրջանի Գանձասար (Բատիկյան) գյուղի մոտ պեղել է 4մ բարձրությամբ և 30մ երկարությամբ դամբարանաբլուր: Նույն շրջանի Հացառատ գյուղում նրա բացած դամբարանաբլուրում եղել է 19 մարդու կմախք, Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղի դամբարանաբլուրում հայտնաբերվել են կառքի վրա մի կմախքի շուրջը՝ 14 այլ մարդկանց, ինչպես և 4 եզների կմախքներ, վարազի գանգ, խեցեղեն, զարդեր: Երթադրվում է, որ այս վայրերում եղել է հանգուցյալի հետ կանանց, ստրուկների և կենդանիների թաղելու սովորությունը:

Հայաստանում առայժմ ապակու ամենահին գյուտերը համարվում են Լճաշենի Ք.ա. 2-րդ հազարամյակի կեսերին պատկանող դամբարաններից հայտնաբերված ուլունքները, որոնք պահպանվում են Հայաստանի պատմության թանգարանում: Ապակյա անոթների գերակշիռ մասը հայտնաբերվել է դամբարաններից: Այդ հանգամանքը զգալի չափով կանխորոշում է ապակեղենի բնույթը: Դամբարաններում գտնված սրվակները հիմնականում անուշահոտ յուղերի և օծանելիքների, ինչպես

նաև մածուկների համար էին օգտագործվում և ննջեցյալի հետ դրվում էին գերեզմանում՝ նրան հանդերձյալ կյանքում ծառայելու համար:

Դամբարանադաշտը դամբարանային թաղումների վայր է: Լայն առումով դամբարանադաշտը այն վայրն է, ուր կան դամբարանաբլուրներ: Սևանի ավազանում կան շատ դամբարանադաշտեր, որոնցից առավել հայտնի է Լճաշենինը: Հայաստանի տարածքում հայտնի են նաև Արթիկի, Գոլովինոյի, Ռեդկին լագերի, Ծովասար (Թազաքնեդի), Էլարի և այլ դամբարանադաշտեր, որոնք պարունակում են քարի դարից մինչև ուրարտական ժամանակաշրջանի նյութեր:

Շամիրամի դամբարանադաշտում և մերձակա հնավայրերում Գ.Արեշյանի ղեկավարությամբ կատարված պեղումների տվյալներով այստեղ գտնվելիս է եղել հնագույն (Ք.ա.11-9-րդ դդ.) մի քաղաքատեղի, ջրամբարով ու լայնատարած դամբարանադաշտով: Քաղաքատեղին ավերվել է Արգիշտի 1–ի կողմից, այնուհետև, շուրջ 7000 տարի անց, Ք.ա 2-1-րդ դդ. վերստին վերաշինվել է՝ վերածվելով գյուղական տիպի բնակավայրի: Շամիրամի հնավայրում առանձնապես ուշագրավ է քաղաքատեղիին կից ընդարձակ դամբարանադաշտը, որը թվագրվում է ուշ բրոնզեդարից մինչև վաղ երկաթի դարի միջև ընկած ժամանակաշրջանով: Հիմնական դամբարանադաշտում կան մեծաքանակ դամբարաններ: Դրանք գլաքարերով կամ անմշակ տուֆասալերով շրջանաձև շարված կրոմլեխներ են՝ խորքում սալարկղային դամբարաններով, որոնք միմյանցից սահմանազատված են տուֆասալերով շարված պատնեշներով: Դրանց վրա պատկերված են տարբեր բովանդակություն (որսի տեսարաններ, ձիեր, զինվորներ, մարտակառքեր և այլն) ունեցող բարձրաքանդակներ: Պատնեշներով օղակված կրոմլեխների վրա կանգնեցվել են մարդակերպ տուֆե մահարձաններ, ֆալլուսներ, տեղ-տեղ՝ նաև մենաքարեր: Շամիրամի հիմանական դամբարանադաշտում պեղված բոլոր դամբարանները անհատական թաղումներ են պարունակում ու թվագրվում են Ք.ա 11-9-րդ դդ:

1.3. Մեգալիթյան հուշարձաններ: Մենհիրներ

Հայկական լեռնաշխարհը հարուստ է մեգալիթյան հուշարձաններով: Մեգալիթյան հուշարձանները (հուն. մեգա- մեծ, լիթոս - քար), այսինքն մեծքարյան

հուշարձաններ են՝ կերտված անմշակ կամ կոպիտ մշակված մակերեսով մեծածավալ քարերից: Մեգալիթյան հուշարձաններից են մենհիրները, դոլմենները, կրոմլեխները, քարարկղերը: Մեծազանգված այս հուշարձանները կապված են թաղման ծեսի հետ, ունեցել են պաշտամունքային նշանակություն և պատկանում են պալեոլիթի, նեոլիթի, էնեոլիթի, բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջաններին:

Մեգալիթյան կառույցների առանձին տիպ են վիշապները, որ հանդիպում են Արագածի և Գեղամա լեռների շրջաններում: Մեգալիթյան կառույցներ շատ կան Հայաստանի տարածքում՝ Աշտարակում, Սևանում, Սյունիքում: Առավել նշանավորն է Սյունիքի ‘Երիվարաց դաշտ’ տեղանքի դոլմենը:

Մենհիրները (մենաքարերը) առանձին կանգնեցված ուղղաձիգ քարեր են, որոնք գերեզմանային ճարտարապետության տեսակին են պատկանում, կանգնեցվել են ննջեցյալի գերեզմանի վրա՝ որպես նրա հիշատակի հսկայական հավերժացման խորհրդանիշ: Դրանք գետնի վրա ուղղաձիգ վիճակում կանգնեցված, անձև ու անմշակ միակտոր քարից են՝ 2–3 մ բարձրությամբ: Մենհիրները հանդիպում են առանձին կամ կրոմլեխների կազմում՝ տեղադրված կենտրոնում, երբեմն շրջանաձև շարվածքի մեջ (օրինակ՝ Շամիրամի դամբարանադաշտում):

Թորամանյանի կարծիքով մենհիրները կամ մենաքարերը, ինչպես նաև դոլմենները սովորաբար կանգնեցվում էին նախնադարյան հասարակության բարձր խավի ներկայացուցիչների՝ տոհմապետների դամբարանների վրա:

Խոշորածավալ, անձև տուֆից ու բազալտից կանգնեցված մենհիրներ հանդիպում են Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղի մոտ գտնվող դամբարանադաշտում և Արուճում (երկու տեղում էլ համատեղված կրոմլեխների հետ), Սիսիանի շրջանի Ախլաթյան, Անիի շրջանի Գուսանագյուղ, Թալինի շրջանի Մաստարա գյուղի սահմաններում և այլուր:

Դոլմեններ

Դոլմենները (դոլ՝ սեղան, մեն՝ քար, սեղանաքար) նույնպես կապված են թաղման ծեսի հետ, կառուցվում էին մեկ կամ մի քանի դամբարանների վրա: Դոլմենները երկու ուղղաձիգ քարի վրա մեկ մեծ հորիզոնական քարով դամբարանային կառույցներ են:

Ինչպես նշում է Թորամանյանը. ՝ընդհարապես զանազան ենթադրություններ եղել են դոլմենների մասին. քննողներից ոմանք զոհի սեղան են կարծել, ոմանք կրոնական որոշ նշանակություններ, և ոմանք պարզապես համոզվեցին, որ նախամարդու գերեզմաններ էին, բայց ոչ հասարակ մարդու, այլ տոհմապետի կամ տոհմի մեջ որոշ իշխանություն և դիրք ունեցող մարդու, որովհետև դոլմեններին զուգահեռաբար կան նաև ուրիշ տիպի գերեզմաններ…՝:

ՀՀ դոլմեններ գտնվում են Սիսիանի, Զորաքարի և Ուզի հնավայրերում, Աշտարակի շրջանի Օշական և Փարպի գյուղերի մոտակայքում, Արագածի շրջանի Ծաղկահովիտ, Վերին Գորիս գյուղերի սահմաններում և այլն:

Կրոմլեխներ

Կրոմլեխները (կրոմ՝շրջան, լեխ՝քար) մեծածավալ անմշակ քարերի օգտագործմամբ շրջանաձև դասավորությամբ գետնի վրա շարված քարեր են մեկ կամ մի քանի գերեզմանների շուրջը,՝ կենտրոնում կամ երբեմն նաև շրջանաձև շարվածքում ունեն մենհիրներ: Հուշարձանների այս տեսակները հանդիպում են Սիսիանի Քարահունջ /Զորաց քարեր հուշարձանում/, Շամիրամում, Արուճում, Ույծի հնավայրում և այլուր:

Կրոմլեխները թաղման ծեսի հետ կապված մեգալիթյան հուշարձանների մի այլ տիպ են, որոնք վերագրում են արևի պաշտամունքին, համարում արևի տաճարներ: Թորամանյանի բնութագրությամբ՝ գերեզմանական ճարտարապետության մեջ, հողադամբարաններից, քարադամբարաններից և դոլմեններից հետո, իբր մահվան մշտնջենական հիշատակարան, կրոմլեխները եղան ժողովրդի համար՝ հավանաբար նախապես նկարագրված մեծ դամբարաններից զուգահեռաբար. որովհետև եթե նախընթացները տոհմապետներին հատուկ էին, կրոմլեխները ևս հասարակ ժողովրդական մշտնջենական հուշարձաններ եղան մահվանից հետո՝:

Վիշապաքարեր

Վիշապաքարեր կոչվող ձկնաձև քարակոթողները նույնպես մեգալիթյան հուշարձնների խմբին են պատկանում: Հնագույն հավատալիքների համաձայն վիշապները աղբյուրների, գետերի պահապաններնն էին: Աշխարհի շատ ժողովուրդների դիցաբանական պատկերացումներում վիշապները պահպանում էին տիեզերական ջրային տարերք-օվկիանոսը, ինչպես հայերն էին ասում ծով- ծիրանին: Հնագույն հայերը հավատում էին, որ վիշապներից է կախված ջրի առատությունը և նրանց բարեհաճությունը շահելու համար զոհեր էին մատուցում, երկրպագում և կանգնեցնում քարակերտ, ձկնակերպ կոթողներ, որոնք ունեին թռչունների, օձերի գլխաքանդակներ: Ավելի հաճախ հանդիպում է ցուլի պատկերը: Ցուլը ըստ հնագույն հավատալիքների նույնպես կապված է ջրի պաշտամունքի հետ:

Վիշապաքարեր հանդիպում են արոտավայրերը ոռոգող գետերի ակունքների, արհեստական ջրամբարների ու ջրանցքների մոտ, հեռավոր ու անմարդաբնակ վայրերում՝ Գեղամա լեռներում, Արագածի լանջերին, Ճորոխ գետի ավազանում: Հայկական լեռնաշխարհից դուրս այս պաշտամունքային հուշարձանը այլ տեղ չի հանդիպում: Վերագրվում են նեոլիթի ժամանակաշրջանին: Ջրակունքների մոտ պոչով գետնին հետված, քարե բերանները բաց հսկա ձկնաձև՝վիշապները՝ երկնքից ջուր են պաղատել:

Օ՞հ լերունք ծաղկած, օ՞հ ջուր ծիծաղկոտ,
Այ դրախտի՞ ջրեր, իջե՞ք, իջե՞ք,
Զերկիրն հայոց արբեցուցեք:

Ղ. Ալիշան

Վիշապ բառը սկզբնապես նշանակել է ՝երկնային ջուր՝: Այն եղել է տոտեմ՝ աղբյուրների, ջրերի ակունքների, լճերի մոտ որպես ջրապաշտպան կուռք: Վիշապաքարերը հանդիպում են մեծ մասամբ Հայաստանի լեռնային շրջաններում:

Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված և հետազոտված վիշապները, չնայած սակավաթիվ լինելուն, կարևոր ու էական հավելում են հնագիտական նյութական արժեքների հայկական գանձարանում: Մեզ հայտնի վիշապների քանակը չի անցնում երեք տասնյակից: Սրանց մի մասը տեղահանվել են իրենց բնական միջավայրից և այլ տեղ տեղափոխվել, մեզ զրկելով հուշարձանը իր կայացման վայրում հետազոտելու, միջավայրին տեղակցելու, միջավայրի հետ, որպես մի ամբողջություն դիտարկելու հնարավորությունից:

Մեգալիթային այս հուշարձանները մի շարք ընդգծված բնութագրերով բաժանվում են երկու խմբերի: Սրանցից մեկը ուղղահայաց կանգնեցված, դեպի վեր լայնացող, նիստերը մշակված, եզրագծերը լավ պահպանված, 150-500սմ բարձրությամբ, 30-60սմ լայնությամբ, գագաթային նիստը մի փոքր կորությամբ, սրացող ծայրը հողի, կամ ապարի մեջ խրված, դրվագված հոծ, իսկ որոշ դեպքերում էլ քիչ ծակոտիներ ունեցող բազալտի քարակոթողներ են: Թեմատիկ առումով դրվագումները հիմնականում նույնն են: Վերևի հատվածը զբաղեցնում է տիկ հանած ցլի գլուխը՝ կոտոշներով, կողքերից մինչև կոթողի երկու երրորդ բարձրությամբ տիկի ոտքերն են կախված՝ կճղակներով: Սովորաբար ձախ կողմից, կամ անմիջապես ցլի գլխի տակ, դրվագված են լինում մեկ, կամ մի քանի օձերի խորհրդապատկերներ, կենտրոնում թռչուն, այծ, կամ խոյ: Որոշ դեպքերում օձապատկերները տեղադրված

են լինում ներքևում հորիզոնականի ուղղությամբ, կամ ավելի բարձր, դիմային մակերեսի ձախ, կամ աջ կողմում, ուղղահայացի ուղղությամբ, կամ մի քիչ թեք: Օձապատկերները կարող են լինել շատ կարճ, կամ բավական երկար և ձգվել քարակոթողի գրեթե ստորոտից մինչև գլապատկերը: Հանդիպում են նաև կենաց ծառի դրվագումներ: Որոշ վիշապաքարերի երկու մակերեսներն էլ դրվագած են լինում: Այսօր հնարավոր չէ ճշգրիտ ասել թե դրվագված համանկարը երկրի չորս մասերից որ մեկին է նայել, որոհետև հայտնաբերված բոլոր վիշապներն էլ, կամ տեղահանված են եղել, կամ թաղված հողի տակ, սակայն փաստ է, որ այդ նիստը արևահայաց է եղել: Վիշապներից շատերը ձեվափոխվել են գերեզմանաքարերի և կամ խաչքարերի: Վիշապաքարերի պղծման գործընթացը նոր չէ: Ք.ա.7-րդ դարում Սևանա լճի ավազանում, ուրարտական սեպագրեր են փորվել, առանձին մի վիշապաքարի վրա: Այսինքն Ք.ա.1-ին հազարամյակի սկզբում վիշապաքարերը այլևս կորցրել էին իրենց երբեմնի գործառույթային նշանակությունը և երկրպագության առարկա չէին:

Վիշապների մյուս տեսակը ձգված օվալի ձև և ձկան տեսք ունի: Սրանցից հայտնաբերել են անցյալ դարասկզբին Գեղամա լեռների միջին բարձրություններում՝ Ոխտակունքի վերին հոսանքի ավազանում: Այնուհետև վիշապաձկներ են գտնվել նաև Սևանա լճի ավազանում, Արագածի վրա, Արարատյան դաշտի հյուսիսային հատվածում, Ախուրյանում, Ախալքալաքում: Սրանք նույնպես զանգվածեղ կոթողներ են, որոնց երկարությունը հասնում է մինչև 460սմ, իսկ բարձրությունը 75սմ: Ձկնակերպ վիշապաքարերի պաշտամունքը հավանաբար մեծ մասսայականություն է վայելել և խորհրդանշել է մարդու համար կենսականորեն կարևոր առարկա, տարերք, կամ գործառույթ, քանի որ նույնիսկ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո, եկեղեցին ոչ միայն հանդուրժել է սրանց գոյությունը, այլև իր կարիքների համար չի փորձել ձևափոխել, կամ օգտագործել որպես շինանյութ, ինչը նկատելի է ուղղհայաց մենհիրների դեպքում: Դաշտադեմում, Գեղարքունիքի մարզի մի քանի գյուղերում ուղղահայաց կանգնեցված վիշապաքարերը ձևափոխել են ըստ պահի անհրաժշտության՝ մահարձանի, գերեզմանաքարի, խաչքարերի: Ձկնակերպ վիշապաքարերի նկատմամբ հանդուրժողականության ցայտուն օրինակ է Ավանի կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքի ներսի կողմից, առանց ձև և տեսքի որևէ

փոփոխության, կամարի փոխարեն տեղադրված համեմատաբար փոքր չափի վիշապաքարը, որպես կոնստրուկտիվ բաղադրիչ :

Ինչպես արդեն նշվեց, վիշապաքարերը տեղադրվել են ջրային ավազանների մոտ, ավելի հաճախ ակունքներում: Ձկնակերպ վիշապաքարերը հավանաբար դրվել են նաև ձկնառատ լճերի մոտ՝ ուղղահայաց դիրքով: Հատկանշական է, որ չնայած բազմաթիվ հալոցքային լճերի առկայությանը ջրբաժանների գագաթամերձ տարածքներում, ցլակառափի հարթաքանդակով վիշապաքարերը մեզ չեն հանդիպել 3000մ բարձր վայրերում:

Վիշապաքարերը մեր լեռնաշխարհի վաղնջական շրջանի պաշտանմունքային հուշարձաններն են: Դատելով մշակման, դրվագման որակից, տեղադրման վայրի ընտրությամբ և այն ահռելի ջանքերից, որ կիրառել են վաղնջական ժամանակաշրջանի մարդիկ՝ շեշտում է այս հուշակոթողների առանձնահատուկ ու կարևոր նշանակությունը:

Ձկնակերպ վիշապաքարերի տեսքը արժանապատիվ հանդարտություն և անդորություն է ճառագում, ի հակադրություն իր սարսափազդու անվանմանը, չնայած, որ, այնուամենայնիվ՝ այս զանգվածային քարակոթողներում հազիվ գծագրվող օձային ուրվապատկեր է նշմարվում: Օրինակ՝ Սարդարապատի վիշատաքարը տեղադրված է Սարդարապատի ազգագրական թանգարանի մուտքի մոտ, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի վիշապաքարը, բերված Արագածի լանջերից 1950-ական թվականներին մի խումբ գիտնականների կողմից և այլն:

Ավելին, հնագույն քանդակագործը նախանձելի վարպետությամբ կարողացել է շարժման և թռիչքի զգացողություն հաղորդել անշունչ բազալտին: Բոլոր ձկնակերպ վիշապաքարերը իրար նման լինելով հանդերձ, նրանցից յուրաքանչյուրը յուրովի ինքնատիպ է և արվեստի մի առանձին, բարձրարժեք ստեղծագործություն:

Հայաստանի ՝Վիշապ՝ քարակոթողների առաջին հետազոտողներ Ն. Մառն ու Յա. Սմիռնովը և նրանց կարծիքը բաժանող Բ. Պիոտրովսկին դրանք մեկնաբանել են որպես ջրի հովանավորներ: Մ.Աբեղյանը վիճարկել է այդ կարծիքը, սակայն ինքը նույնպես դրանք կապել է ջրի պաշտամունքի հետ, վիշապները համարել է ջրի աստվածուհու՝ Աստղիկի արձաններ, վերագրելով դրանք ուրարտական և վաղ հայկական ժամանակաշրջաններին:

Ըստ հնագետ Հակոբ Սիմոնյանի, վիշապները խորհրդանշել են մեռնող և հարություն առնող աստվածությունը, ըստ հնագույն պատկերացումների պահել են երկինքը և խորհրդանշել են արական սկիզբը: Վիշապները (ինչպես արդեն նշվեց) կանգնեցված էին ջրերի ակունքների մոտ և դրանք ջրերը պաշտպանող դեր էին կատարում: Մյուս կողմից վիշապների հետ կապված մեր ավանդազրույցների մեջ, որ վիշապը գալիս է աղբյուրի ակը փակում է և մինչև զոհ չլիներ վիշապը չէր բացում աղբյուրի ակը:

՝Պառավը գնում է մի թաս պղտոր ջուր բերում՝ էնքան պղտոր, որ կասես ցեխ լիներ:

Տղան հարցնում է.

-Մերս, ձեր ջուրը ինչի է էսքան պղտոր:

-Այ որդի, -ասում է,- մեր ջուրը տարին տասներկու ամիս պղտոր է լինում, մենք իսկի պարզ ջրի երես տեսնում ենք որ…Մեր աղբրի ակնումը մի օխտը գլխանի վիշապ է նստել, չի թողնում, որ ջուր գա: Շաբաթը մի երեխա ենք տանում տալիս վիշապին, ուտում է՝ նոր մի պուճուր ջուր է թողնում, որ ինչ է՝ խալխը ծարավ չկոտորվի: Էգուց էլ թագավորի աղջկա հերթն է, պիտի տանեն վիշապին տան, որ ջուրը բաց թողնի՝:

Հին հայկական մատենագրության մեջ Վահագն համարված է «Վիշապաքաղ»՝ վիշապ քաղող, վիշապներին հավաքող, վերացնող, ոչնչացնող-վիշապասպան. «Վահագնը ծնվելուն պես կռվի է բռնվում սև և ամեհի վիշապների դեմ, սպանում նրանց, ազատում տիեզերքը կործանման սպառնալիքից»:

Մեր դարբիններից շատերը մինչ օրս կիրակի օրը հարվածում են սալին, որ ամրացնեն վիշապի շղթաները: Շղթայված վիշապը տարբեր կերպարներով բազմիցս հանդիպում է մեր առասպելներում: Հետաքրքիր է, որ վիշապների ու հրեշների կերպարները հիշատակվում են նաև հայ մատենագիրների՝ Մովսես Խորենացու, Մովսես Կաղանկատվացու, Ղևոնդ Ալիշանի և այլոց մոտ:

Կա առասպել, ըստ որի Կոստանդ կայսրը ի նշան դաշինքի Տրդատ արքային է նվիրում վիշապի արյան մեջ թաթախված նիզակ:

Արշակ թագավորը նույնպես ուներ վիշապի արյան մեջ թաթախված հզորագույն նիզակ, որը պարիսպներ էր քանդում: Ալիշանի գրառած առասպելի համաձայն, Երվանդ արքան ծնված էր օձ հորից և երկրպագում էր վիշապին: Նրա չար

աչքից փլուզվում էին նույնիսկ ժայռերը: Ըստ երկրաբան Հայկ Մելիք-Ադամյանի Վայոց Ձորի մարզում հայտնաբերված հսկայական թռչող մողեսի մասունքները և Սևանի լեռներում գտնված դինոզավրի ոսկորները վկայում են, որ հրեշների և վիշապների մասին առասպելները իրական հիմք են ունեցել:

Այսպիսով կարելի է նշել, վիշապը չարու և բարու միասնականացումը կամ համատեղումն է մի կերպարի մեջ:

1.4. Ժայռապատկերներ

Ժայռապատկերները քարանձավների պատերին, առաստաղներին, ժայռերի և քարերի մակերեսներին փորագրված կամ նկարված հնագույն պատկերներ ու տեսարաններ են, որոնք արվել են հին քարի դարից մինչև միջնադար: Նրանք ունեն տարբեր իմաստներ. ծիսային, հիշատակային, խորհրդանշական զանազան խմբավորումներով: Հայկական լեռնաշխարհը հարուստ է բազմաթիվ ժայռապատկերներով: Ժայռապատկերների արվեստը ուշ նախնադարյան Հայաստանի հոգևոր կյանքի ամենանշանակալից երևույթներից է: Այն արտահայտում է մարդու վերափոխված վերաբերմունքը բնության նկատմամբ և իրականության բարդ, բազմակողմանի, փոխադարձորեն կապակցված երևույթների ավելի խոր ընկալումը:

Գոյության շուրջ չորսհազարմյա ժամանակաընթացքում, այդ արվեստը մշտական շարժման ու փոփոխությունների մեջ անդրադարձնում է պատմական զարգացման տարբեր փուլերի առանձնահատկությունները, կատարման տեխնիկայի ու ոճերի բազմազանությունը, նախնադարյան նկարիչների հարյուրավոր սերունդների անհատական ճաշակը, ձիրքը, տաղանդն ու կարողությունները, և իր ամբողջության մեջ ներկայանում է իբրև բարդ ու՝ անլուծելի շղթաներով՝ կապակցված մի ֆենոմեն և որը մանրակրկիտ վերլուծելու և ուսումնասիրելու անհրաժեշտություն ունի:

Հայաստանում քարի-բրոնզի դարերի նյութական մշակույթի հուշարձանների մեջ կարևոր տեղ են գրավում մի շարք վայրերից գտնված ժայռապատկերները: Դրանք բազմիցս գրավել են հնագետների ուշադրությունը, խորհելու տեղիք է տվել դրանց տարիքն ու ծագման առեղծվածը:

Ժայռապատկերը կամ իծագիրը քարանձավների պատերին, առաստաղներին, ժայռերի և քարերի մակերեսներին արված հնագույն պատկերներ ու տեսարաններ են: Ժայռապատկերները հայտնի են երկրագնդի բոլոր մասերում՝ աշխարհի ավելի քան 120 երկրներում: Հնագույն ժայռապատկերները վերաբերվում են հին քարի դարին, վերջինները՝ միջնադարին: Կատարման տեխնիկայով բազմազան են՝ հանքային ներկերով արված բազմագույն նկարներից մինչև տարբեր որակի ուրվագծային պատկերներ ու հարթաքանդակներ:

Հայաստանում ժայռապատկերների հայտնագործությունների վայրերը կարելի է դասել հին ժամակաշրջանի նշանավոր հուշարձանների թվին: Նրանք գրավում են հսկայական տարածքներ և ավելի հաճախ հանդիպում են Գեղամա լեռների ոչ խոր լեռնային հովիտներում, Արագածի բարձրադիր լանջերին և քարայրներում, Սյունյաց լեռներում (Սիսիան): Ընդհանուր թվով 20000 ժայռապատկեր, որից ավելի քան 6000 գտնվում է Սյունաց Ուղտասարում: Ք.ա. 7-րդ հազարամյակով և ավելի հին ժամանակներով թվագրվող ժայռապատկերները փորագրված են անդեզիտի և բազալտի քարաբեկորների վրա՝ 1-6 միլիմետր խորությամբ:



Մինչ օրս առեղծվածային է այն հանգամանքը, որ երբ նոր ժամանակներում փորձ է արվում նմանակել ժայռապատկերների գծանկարները, ապա կրկնօրինակվող քարերը բորբոսնում են, ի տարբերություն Ք.ա 7-1–ին հազարմյակների վաղեմություն ունեցող ժայռագրերի:

Ժայռապատկերը պատմում են նախնադարյան բնապաշտ մարդու դիտարկումների և երևակայության խորհրդավոր աշխարհի մասին: Դրանք հարուստ նյութ են տալիս Հայկական լեռնաշխարհի բնակիչների կենցաղը, պաշտամունքը,

սովորություններն ու արվեստը ուսումնասիրելու համար և կարևոր նշանակություն ունեն որպես պատմական սկզբնաղբյուրներ։

Հայաստանի ժայռապատկերների առանձնահատկություններից մեկը գունազարդ նկարների բացակայությունն է: Կան գունազարդման հազվագյուտ հետքեր, այսինքն՝ երևում է, որ որոշ ժայռապատկերները ժամանակին գունավորված են եղել հանքային ներկերով (հիմնականում օխրայով), սակայն մինչև այժմ ամբողջական նմուշ չի գտնվել:

Նախնադարի ընդգրկուն գաղափարաբանությունն արտահայտելու համար ժամանակի արվեստագետները ընտրել են սխեմատիկ, պայմանական ձևերը, արվեստի ընդհանրացված, վերացարկված, խորհրդապաշտական լեզուն։ Նրանք պետք է խորհրդանիշերի՝ պատկերագրերի և նշանագրերի միջոցով սերունդներին պատմեին իրենց կենսագործունեության բոլոր կողմերի մասին։

Ավանդաբար ժայռապատկերները համարվել են որսի ժամանակ հաջողությունների հասնելուն ուղղված ծիսամոգական տեսարաններ՝ ամրգրված քարաբեկորների վրա: Գիտնականների մի խումբ հակված է համարելու, որ նախնադարյան մտածողությունը բավականին պարզունակ էր նման խորը գաղափարներ արտահայտելու համար, սակայն մարդը երբեք այնքան կապված չի եղել բնությանը և կյանքը կանոնակարգելու անհրաժեշտությանը, որքան նախնադարյան ժամանակներում: Հետևաբար, ժայռապատկերների ներշնչման աղբյուրը նախնադարյան ճանաչողության փափագն էր, բնախույզի պատկերավոր երևակայությունը, իրական դիտումների վրա հիմնված բնապաշտպանությունը, նաև ծիսական հմայությունը, համաձայն որի, բնության բարեհաճությանն արժանանալու համար հարկավոր էր գերբնական ուժերի միջոցով ազդել նրա վրա: Ժայռապատկերները միասնական ոճի մեջ պատմում են նախնադարյան բնախույզի դիտարկումների և երևակայության խորհրդավոր աշխարհի մասին։ Գծանկարային ժայռապատկերները նախնադարյան մարդու նկարելու անկարողության արգասիքը չեն, այլ նրա մտածողության առաջընթացի հավաստիքը, քանի որ սեփական աշխարհայացքը նյութականացնելու համար նա ստեղծում է արվեստի նոր լեզուն՝ վերացարկումը, արտահայտելու համար իր զգայական ներաշխարհը և համատիեզերական պատկերացումները ճիշտ այնպիսի արտահայտչաձևով,

ինչպիսիք որդեգրվում են միջնադարյան արվեստի, ապա ավանգարդիստական ուղղությունների ձևաստեղծումներում:

Ինչ են ցուցադրում մեր ժայռապատկերները:

Քարերի, ժայռերի վրա նախնադարյան մարդը պատկերել է իր շրջապատը, իր շրջապատի երևույթները, զբաղմունքները, բուսական ու կենդանական աշխարհը, հավատալիքները եւ այլն: Քարերի վրա պատկերված են այծ, հայկական մուֆլոն, եղջերու, վարազ, ձի և այլ կենդանիներ: Շատ են նաև ժամանակի զինատեսակների պատկերները՝ նիզակ, տեգ, վահան, օղապարան, նետ եւ աղեղ, ինչպես նաև զինվորներ և որսորդներ: Մեծ տեղ է հատկացված որսի տեսարաններին, քանի որ մարդու գոյությունը պայմանավորված էր որսով: Պատկերված են որսի բազմաթիվ եղանակներ՝ միայնակ կամ խմբային, տարբեր թակարդների միջոցով, որոնք մեզ պատկերացում են տալիս մեր լեռնաշխարհում բնակվող նախնադարյան մարդու այդ զբաղմունքի վերաբերյալ: Ժայռապատկերներում ուշագրավ են արորի պատկերները, արորին լծված են եզները, որը կարևոր աղբյուր է Հայկական լեռնաշխարհում արորային երկրագործության վերաբերյալ: Ուշագրավ են երկանիվ և քառանիվ սայլերը, որոնց օրինակները գտնվել են Սևանի ավազանի հնագույն դամբարանների պեղումների ժամանակ: Պատկերված են նաև դահուկ կոչվող սահնակները, որոնցով բեռներ էին տեղափոխում:

Ժայռապատկերներում արտահայտված են Հայաստանի ողջ կենդանական աշխարհը, մարդու պայքարը վայրի գազանների դեմ: Այդ ժայռապատկերներն ու գաղափարագրերը, անցնելով հազարամյակներով, 19-րդ դարի վերջերին մեզ են հասել մեծ ճշգրտությամբ: Դրանցում մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայկական լեռնաշխարհի ցեղերին բնորոշ տարազի որոշ տարրեր: Ճիշտ է, նախնադարյան մարդը մեծ մասամբ մերկ է պատկերված, սակայն հանդիպում են նաև շատ արժեքավոր նյութեր տարազի վերաբերյալ:

Այստեղ կան նաև տիեզերական հասկացությունների հետ առնչվող պատկերներ, որոնք վկայում են, որ նախնադարյան մարդը հետազոտել է տիեզերքը և պատկերներ թողել քարաբեկորների վրա: Ժայռապատկերներում պատկերված են որսի ժամանակ հաջողությունների հասնելուն ուղղված ծիսամոգական

տեսարաններ: Առանց գաղափարագրերի, ժայռապատկերների անհնարին կլիներ հասկանալ նախնադարյան հասարակության պատմության շատ խնդիրներ:

Ուղտասարի ժայռապատկերների գերիշխող մեծամասնությունը կազմում են այծերի պատկերները, այդ պատճառովել շատ տարածված է դրանց այծագրեր կամ իծագրեր անվանումը: Այծերի գերակշռությունը ժայռապատկերներում պատճառաբանված է եղել, որ այծն է եղել այն կենդանին, որը նախնյաց կյանքում ունեցել է տնտեսական շատ կարևոր նշանակություն և հետևաբար ստացել է նաև պաշտամունքային հիմնավորում: Այծապատկերները շատ հաճախ են ուղեկցվում երկնային մարմինների պատկերներին: Մի շարք պատկերներ հասնում են գրեթե լուսանկարչական ճշտության: Վստահելով նախնադարյան մեր նկարչի ռեալիզմին մերօրյա կենդանաբանը կարող է տարբերել ցեղակից կենդանիներին. ասենք գայլը շնից, կամ բադը ջրահավից: Սա շատ կարևոր է հատկապես անհետացած կամ ոչնչացված կենդանատեսակի դեպքում:

Բազմաթիվ են անորոշ, առայժմ անհասկանալի նշանները ՝ պարույրներ, սլաքներ, կոր և ուղիղ գծեր, դրանց մի մասը անկասկած զարդանախշեր են, իսկ մյուս մասը ամենայն հավանականության գաղափարագրեր են, որոնց մի մասը նման են լատինական, հունական և հայկական տառերին: Դրանցով երբեք որևէ բառ չի գրվել քարի վրա, չի կարելի ասել, որ դրանք ունեն հնչյունային արժեք, սակայն արտահայտել են որոշակի միտք, գործողություն կամ առարկաների ցուցակներ:

Գաղափարագրերը հետագայում որպես գրչության ձև, երևում են Վանի թագավորության ժամանակաշրջանի արձանագրություններում և միջնադարյան կրոնահմայական, աստղագիտական բնագրերում:

Աշխարհի բոլոր ծայրերում կան ժայռապատկերներ, սակայն Հայաստանի ժայռապատկերները շատ բազմազան են: Հայաստանի ժայռապատկերները իրենց արտահայտած թեմատիկայի առումով ընդգրկված են թեմատիկ 15 խմբերում ՝ օրինակ անշարժ բնության տարրեր, կենդանի բնության տարրեր, առասպելական կենդանիներ և այլն: Այս թեմատիկ

խմբերի մի մասը աշխարհի այլ վայրերում կամ բացակայում են, կամ թույլ են արտահայտված: Այնպիսի պատկերներ, ինչպիսիք են վիշապները, աստղային քարտեզները, օրացույցները, տառանման նշանները գրեթե չկան:

Աշխարհի այլ վայրերի հնավայրերում ժայռապատկերները միաժամանակ կամ միատեղ ներկայացնում են հինգ կամ վեց թեմատիկ խումբ: Օրինակ՝ Սիբիրի , Ալթայի կամ Միջին Ասիայի ժայռապատկերներում մոտ 5000 ժայռապատկերներ սփռված են 2-3 քկմ տարածքի վրա, դրանց 90-95% այծեր են, մոտավորապես 2% կազմում են մարդկային պատկերները և որսի տեսակները, հնարավոր է արևի նշանի մեկ պատկերում և այլն: Իսկ օրինակ Հայաստանում՝ Գեղամա լեռներում 1 քկմ տարածքի վրա կա 30 ժայռապատկերների կուտակման փոքր խմբեր, ընդ որում յարաքանչյուր խումբ իր մեջ ներառում է բոլոր թեմատիկաները:

Ինչ է սա նշանակում:

Թեմատիկայի նման հարստությունը տարածքում, ժայռապատկերների խտացվածությունը վկայում են, որ ժայռապատկերման արվեստը, ավանդույթները, աշխարհի մասշտաբով, ունեն կենտրոնասփյուռ բաշխում, ինչը լեռնաշխարհի էթնոմշակութային հզոր ալիքների տարածման մի վկայություն է: Այսինքն առկա է ևս մի կռվան, ստացված ժայռապատկերների միջոցով, ըստ որի հնդեվրոպական նախահայրենիքը գտնվում է Հայկական լեռնաշխարհում: Միաժամանակ սա ապացույց է հայ ժողովրդի բնիկություն:

Ինչպես ասվեց, Ժայռապատկերների մի մասն ունեն աստղագիտական բնույթ: 7 -րդ դարի նշանավոր հայ աստղագետ, տոմարագետ, գիտնական, փիլիսոփա Անանիա Շիրակացին այդ առթիվ գրում է, որ նախնիների զգայարանները ավելի սուր էին, քան այժմյան մարդկանց զգայարանները, ուստի կարողացան ոչ միայն արեգակի ընթացքը նկատել, այլև մյուս բոլոր լուսատուների, և շարունակում է, ոչ միայն նկատեցին, ոչ միայն ուսումնասիրեցին, այլև այդ շարժումները դրոշմեցին քարերի վրա: Այս առումով կարելի է նշել, որ աստղերից, համաստեղություններից, արևից, լուսնից բացի ժայռապատկերներում հայտնաբերվել են գիսավորի մեկ պատկերում, ինչպես նաև երկնաքարի անկման երևույթի մեկ շքեղ պատկեր:

Մոտավորապես Ք.ա. 1-ին հազարամյակում ժայռապատկերները իրենց տեղը զիջում են տեղեկությունների արտահայտման առավել կատարյալ համակարգին, այսինքն ՝ սեպագրերին, հետագայում նաև հնչյունային գրին :

Ինչ է տալիս ժայռապատկերների ուսումնասիրությունը:

Փաստորեն ժայռապատկերները Ք.ա. 7-1-ին հազարամյակների պատմական իրականության բացահայտման միջոց են, որոնք պատկերագրորեն, յուրովի արտահայտում են վաղնջական անցյալը: Դրանով իսկ ժայռապատկերները ծառայում են իբրև պատմագիտության ու մշակութաբանության հավաստի սկզբնաղբյուրներ: Եվ վերջապես .

Ինչն էր դրդում մարդուն նկարել, ռ±րն էր նրա ներշնչանքի աղբյուրը :

Բնականաբար արվեստի դրդապատճառ միշտ էլ ծառայել են նորը, անսովորը, տարօրինակը, գեղեցիկը, վեհը, ողբերգականը: Այս ամենը արտահայտված են մեր ժայռապատկերներում:

1980 թ-ից ժայռապատկերնրով քարաբեկորներից մի քանիսը ցուցադրվում են Սիսիան քաղաքի Քարադարան թանգարանում: 1990թ. Քարադարանի հարևանությամբ բացվել է Նիկողայոս Ադոնցի անվան Հայաստանի պատմության թանգարանի մասնաճյուղը ,որտեղ ցուցադրվում են հնագույն ժամանակներից մինչև մեր օրերում ստեղծված արժեքներ:

1.5.Հնագույն կառույցներն ու հնավայրերը Հայաստանում: Զորաց Քարեր

Հայաստանի տարածքում գտնվող հնագույն շրջանի ամենաարժեքավոր հուշարձանը Քարահունջը կամ Զորաց քարերը, որը վկայում է, որ մեր տարածքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից և հնագույն մշակույթի կարևոր կենտրոն է: Զորաց քարերը աշխարհի հնագույն մեգալիթյան հուշարձաններից մեկը գտնվում է Սյունիքի մարզում՝ Սիսիան քաղաքից 3 կմ հյուսիս- արևելք,՝ Երևան-Մեղրի միջպետական մայրուղու աջ կողմում: Ծովի մակարդակից բարձր է 1770 կմ: Քարահունջ

անվանումը ստուգաբանվում է տարբեր կերպ՝ որպես քար և հունչ՝ խոսող քարեր կամ քար և ունջ՝ հատակ, տակ:

Հուշարձանը բաղկացած է մենհիրներից՝ մենաքարերից, որոնք ուղղահայաց կանգնած քարեր են: Մենհիրները հանդիպում են առանձին կամ կրոմլեխների կազմում: Շրջանաձև շարված մենաքարերը կազմում են կրոմլեխ (շրջան- քար)՝ տեղադրված 7 հա-ից ավելի տարածության վրա: Որոշ կրոմլեխների մեջ կան մի քանի դոլմեններ:

Հուշարձանի բոլոր քարերը բազալտից են և նրանց մի մասի վրա կան անցքեր: Ուշագրավն այն է, որ համալիրի 223 քարերից 84-ի անկյունները յուրօրինակորեն ուղղված են տիեզերքի տարբեր կետերին և երկնային լուսատուների որոշակի դիրքերին:

Ըստ գիտնականների Զորաց քարերը իրենից ներկայացնում է հնագույն աստղադիտարան՝ նախատեսված երկնային լուսատուների շարժը դիտելու և ժամանակը չափելու համար, իսկ քարերի վրա բացված անցքերը նախատեսված են տարբեր բարձրություններից, որոշակի կետերից երկնային լուսատուների շարժը և դիրքը հետևելու համար: Այս տեսակետի կողմնակիցն է ակադեմիկոս Պարիս Հերունին: Նա 1994 թ-ից հետազոտել և ապացուցել է, որ Քարահունջը եղել է հեթանոսական տաճար, համալսարան և հզոր աստղադիտարան, որն ակտիվորեն գործել է ավելի քան 7500 տարի առաջ:

Նման հուշարձան-աստղադիտարաններ են Անգլիայի Սթոունհենջը՝ 5000 տարեկան, Իռլանդիայի Նյու Գրենջը՝ մոտ 4500 տարեկան, Շոտլանդիայի Քալենիշը՝ մոտ 4000, Ֆրանսիայի 4000 և Եգիպտոսի 4500 տարեկան Քարնակները և այլն:

Իսկ ինչու Զորաց քարեր կամ Քարահունջ: Երկար ժամանակ հնավայրը այլալեզու կոչվել է Ղոշուն Դաշ, որը հենց թարգմանվում է Զորաց՝ զորքերի քարեր: Ժողովուրդը պատմում է մի հետաքրքիր լեգենդ այն մասին, որ մենհիրների տակ թաքնված են զորքեր: Ըստ քարի մեծության, ամեն մի քարի տակ տեղակայված է զինվորների համապատասխան քանակություն: Թշնամիները միշտ ահով են անցել այդ քարերի կողքից՝ դանդաղեցնելով ձիերի վարգը, որ որքան հնարավոր է անաղմուկ անցնեն և չարթնացնեն քնած զորքերին: Ժողովուրդը տեղանքն անվանել է նաև՝Քարե գանձ՝,՝Ցից քարեր՝,՝Հիմնաքարեր՝:

Մեծամոր

Մեծամորը Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակատեղիներից, գտնվում է Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղում, Մեծամոր գետի ակունքներից ոչ հեռու, Երևանից 30 կմ արևմուտք, Արարատյան դաշտի կենտրոնում: Պեղումները հաստատում են, որ այս պտղաբեր, սառնորակ աղբյուրներով, որսատեղիներով, արոտավայրերով հարուստ հովտում յոթ հազար տարի առաջ հանգրվանել է մարդը: Մեծամորի ամրոցը հիմնադրվել է հրաբխային ծագում ունեցող մեծ բլրի վրա:

Մեծամորի ամրոցը ունեցել է պարսպապատ միջնաբերդ, պալատական շինություն, փոքր բլրի վրա եղել են աստղադիտարան, դամբարաններ, բնակելի, օժանդակ կառույցներ, մետաղաձուլարան, արհեստանոցներ:

Ամրոց-բնակատեղին մետաղաձուլական հնագույն կենտրոն է, որի արտադրական, պաշտամունքային շինությունները, կացարանները, հնագիտական առատ նյութը վկայում են հազարամյակներ առաջ այստեղ մետաղի ձուլման, արհեստագործության, մշակույթի, շինարվեստի զարգացման բարձր մակարդակի մասին: Մեծամորում գտնվել են աշխարհի ամենահին մետաղաձուլական-երկաթահալոցային վառարանները, կավից և մանրացրած ոսկորից պատրաստված բրիկետներ՝ արճճի հալման գործողությունն արագացնելու համար, մետաղակաղապարներ ու քար ջարդող սարքեր, բրոնզի ծանր կտորներ ու մետալուրգիական թեթև խարամի նմուշներ և այլն: Ուսումնասիրությունները հաստատում են, որ կյանքն այստեղ հարատևել է Ք.ա 5 - րդ հազարամյակից մինչև մեր թվականության 18- րդ դարը:

Վաղ երկաթի դարաշրջանում Մեծամորը եղել է արևելյան տիպի խոշոր քաղաք: Այն իր միջնաբերդով և հարթավայրում կառուցված, դեպի Ակնա լիճ տարածվող քաղաքով, նախնական տվյալներով, զբաղեցրել է մոտ 200 հա տարածք:

Կիկլոպյան հզոր պարիսպներով պաշտպանված միջնաբերդում հիմնականում կենտրոնացվել են իշխանավորների և քրմական դասի պալատական շինությունները, տաճարական համալիրն ու արտադրական գլխավոր կառույցները (ձուլարանները, արհեստանոցներ, մետաղի հարստացման կառույցներ):

Քաղաքը բաղկացած է եղել միջին և ստորին խավերի բնակելի թաղամասերից, ունեցել է առանձին սրբատեղի, որի մի հատվածը պահպանվել է ՝Կարմիր քարեր՝ կոչվող տեղամասում:

Քաղաքն ունեցել է երկու դամբարանադաշտ. Մեկը՝ Ակնա լճի մոտակայքում, մյուսը՝ ամրոցից արևելք, հյուսիս-արևելք: Տարոնիկ գյուղի մի հատվածը նստած է դամբարանադաշտի վրա: Դամբարանադաշտից պեղված են համայնքի ավագանուն և մյուս ներկայացուցիչներին պատկանող քարակերտ հսկայածավալ դամբարաններ՝ դագաղի համար փայտե պատգարակով, ոսկուց, արծաթից, բրոնզից, անագից և այլ նյութերից պատրաստված իրերով, սարդիոնե, սաթե, ապակե ձևավոր ուլունքներով, բազմագույն ջնարակով պատած կավամաններով, որսի տեսարաններով՝ զարդաքանդակված խեցեղենով: Դրանք տեխնոլոգիական նորույթներով հագեցած տարատեսակ արհեստների, հատկապես՝ ակնագիտության և մետաղամշակման խոսուն վկայություններ են: Քաղաքն ունեցել է իր սրբատեղին՝ աղբյուրներով հարուստ ՝կուս-քարեր՝ կոչվող վայրում:

Պատմական, պաշտամունքային, մշակութային մեծ արժեք է ներկայացնում ամրոցի արևմտյան լայնադիր դարավանդի վրա տեղավորված յոթ սրբարաններով և տնտեսական շինություններով Տաճարական համալիրը: Այն ծառայել է բնակչության համընդհանուր ծիսակատարություններին, սեզոնային տոնախմբություններին՝ գարնան, բնության զարթոնքին, բերքահավաքին: Մեծամորի տաճարում օծման արարողություններ էին կատարում, աստծուն զոհ մատուցում, գինի հեղում, սրբազան հաց թխում, որը մատուցվում էր աստծուն և ծեսի մասնակիցներին:

Մեծ բլրի վրայի ամրոցը պաշտպանված է եղել աշտարակավոր կիկլոպյան ամրոցով, որից դուրս եղել են կացարաններն ու տնտեսական շինությունները: Մեծամորի փոքր բլրաշարքը պաշտամունքային նշանակությունից բացի ունեցել է աստղագիտական նշանակություն, ուսումնասիրությունները հավաստում են, որ Ք.ա. 2800-2600 թ-ին այստեղ դիտվել է Սիրիուսի ծագելը, որի երևան գալը հավանաբար

կապել են նոր տարվա սկզբի հետ և երկրպագել: Գոյություն է ունեցել մետաղաձուլական խոշոր արտադրություն, որ մասին վկայում են աղյուսակերտ, գլանաձև ձուլարանները, դրանց մոտ հայտնաբերված թափոններն ու ձուլման կաղապարները: Պարսպից դուրս կան կից քարե շինությունների հետքեր:

Մեծամորն ուներ հզոր բանակ և զարգացած մետաղագործություն: Արհեստանոցներն ու ձուլարանները, հնոցները տեղավորած են ամրոցի կիկլոպյան պարսպից դուրս, բլրի փեշերին:

Ք.ա. 8-րդ դարում Վանի թագավորությունը նվաճել է Մեծամորը, հրդեհել, սակայն կարճ ժամանակ անց կյանքն այստեղ վերահաստատվելով շարունակել է իր արտադրական նշանակությունը:

Միջնաբերդի տարածքում հայտնաբերվել են անտիկ ու հելլենիստական ժամանակաշրջանների սակավաթիվ նյութեր: Միջնաբերդում պահպանվել են միջնադարյան շինությունների մնացորդներ և հնագիտական ուշագրավ նյութեր, որոնց շարքում հիշատակության են արժանի Լևոն Բ-ի 14-րդ դ. արևմտաեվրոպական դրամները:

1965 թվականից Մեծամորում պեղումներ են կատարվել և դրանք ղեկավարել է հայտնի հնագետ Էմմա Խանզադյանը: Պեղումների արդյունքում պարզվեց, որ Մեծամորի տարածքում էր գործել աշխարհում առաջիններից, եթե ոչ առաջին մետաղաձուլարանը՝ Ք.ա. 4-րդ հազարամյակ: Մի քանի տարի տևած աշխատանքների ընթացքում հնագետները գործիքների, կարասների, զարդեղենի և դամբարանների այնպիսի քանակ հայտնաբերեցին, որ թանգարան բացելու անհրաժեշտություն առաջացավ, 27 հազար նմուշներ ապաստան գտան այդտեղ: Հնագիտական արժեքներից միայն հազարն է ցուցադրված Մեծամորի պատմահնագիտական թանգարանում՝ ծիսական կավանոթներ, բրոնզե շքասեղներ, ապարանջաններ, զարդարուն կարասներ, բաբելական սեպագրերով ագաթե գորտ-կշռաքարը (Ք.ա. 16-15-րդ դդ.), եգիպտական հիերոգլիֆներով սարդիոնե կնիքը՝ երկտող եգիպտական արձանագրություններով և եգիպտական կոյաբզեզները, որոնք

վկայում են, որ հեռավոր անցյալում Մեծամորը մշակութային և առևտրական կապեր է ունեցել Հին Արևելքի զարգացած երկրների հետ, գործել է համաշխարհային քարավանային ճանապարհների խաչմերուկում:

Թանգարանում ցուցադրվում են շատ այլ արժեքավոր նյութեր: Մնացած մասը պահվում է արխիվներում և այլ թանգարաններում:

Ուշագրավ են աստղագիտական նշանակության գտածոները: Հայտնաբերվել են յոթ դիտահարթակներ ունեցող հնագույն աստղադիտարան, նաև Արեգակի, Լուսնի և հինգ հնագույն մոլորակների թվին համապատասխան յոթ տարբեր չափերի սյուներով մի զոհարան-տաճար:

Մեծամորը հնագույն աստղագիտական կենտրոն էր, որի բարձունքներից մեր նախնիները, մասնավորապես, քուրմ-աստղավետները հետևել են Սիրիուս աստղի ծագմանը երկնակամարում, ուսումնասիրել աստղային երկնքի և տիեզերքի օրինաչափությունները. այնուհետև պատկերել այդ ամենը շրջակա ժայռաքարերի վրա: Մեծամորի պղնձե-գոտի օրացույցներն Արարատյան դաշտից դիտվող հյուսիսային երկնակամարի յուրովի քարտեզներ են, ամենահինը աշխարհի հնագույնների շարքում: Աստղադիտարանը, գոտի-օրացույցները ու զահարան-տաճարը սահմանում են հայկական տոմարի և տոմարագիտության սկիզբը:

Թանգարանից քիչ հեռու բաց երկնքի տակ սփռված են հնագույն պղնձաձուլարանի հայտնաբերված հատվածները: Մեծամորը եղել է մետաղաձուլական և մետաղամշակման հնագույն կենտրոն, պահպանվել է ժայռերի մեջ կառուցված ձուլարանի ողջ համակարգը: Հողի շերտերում հայտնաբերվել են անագ, պղինձ, ցինկ, ֆոսֆոր, սնդիկ: Մոտակայքում հոսող գետը հեշտացրել է ձուլարանի աշխատանքը:

Պեղումների արդյունքում Մեծամորում հայտնաբերվել են գաղափարագրեր (1963թ.): Մատենադարանի ձեռագրերում մեծ քանակությամբ հայկական գաղափարագրեր են պահպանվել, որոնք վկայում են, որ դրանք կիրառվել են հին Հայաստանում մինչև Մաշտոցի ստեղծած այբուբենը:

Մեծամորի գաղափարագրերը հաստատեցին հնագույն (մինչև սեպագրերը) Հայաստանում դպրության առկայությունը և ուղղակի ապացույց հանդիսացան (մետաղագործական արտադրությունից հետո) պետականության գոյության:

Գրության ժամանակով Մեծամորի գաղափարագրերն ավելի հին են հայկական սեպագրերից: Համակարգը պատկերագաղափարային (վերացական-պատկերային) և վանկայբենական է: Գաղափարագրերի վերծանումները ցույց տվեցին, որ բնագրերը ծիսական-արտադրական բնույթի են՝ կապված մետաղագործության հիմնական պրոցեսի հետ:

Մեծամորը հնագույն Հայաստանի, ավելի ճիշտ, Հայաստանում հայ ժողովրդի հնագույն գոյության մեծագույն հուշարձանն է: Մեծամորում պեղումները շարունակվում են :

Ըստ պատմահայր Խորենացու Մեծամորը (Մեծ մայր) հին հայկական դիցուհի Անահիտի մակդիրն է կամ երկրորդ անունը, որը համարվում էր պտղաբերության, ողջախոհության հովանավոր:

Մեծամոր բլուրները կոչված են Մեծամոր գետի անունով, որը Խորենացու ժամանակ՝ 5-րդ դարում, հոսում էր Արաքսին զուգահեռ, այդ բլուրների ստորոտում: Մեծամոր գետն անցյալում թափվում էր Արաքսի մեջ Հայաստանի հինավուրց մայրաքաղաք Արտաշատի մոտ, այնտեղ, որտեղ վեր է խոյանում Խոր-Վիրապ վանքը: Մոր նշանակում է ջուր, ճահճուտ, տիղմ, Մեծամոր՝ մեծ ճահճուտ: Մեծ մոր է կոչվել Արաքսի ձախ ափին լճակ-ճահճուտների, շամբերի, գետերի ստորին հոսանքների համակարգը, որից և իր անունն է ստացել գետը: Եվ ամբողջ տարածքն է կոչվել Մեծամոր:

ԳԼՈՒԽ 2. ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

2.1 Հավատալիքներ

Նախնադարյան ժամանակներից մեզ հասած նյութական մշակութի մնացորդները, ինչպես նաև հայ ժողովրդական բանահյության ու ազգագրության հարուստ տվյալները հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացումներ կազմել Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների գաղափարական պատկերացումների, հավատալիքների և պաշտամունքի մասին: 50-35 հազար տարի առաջ ձևավորվում են հոգևոր մշակույթի սաղմերը՝ կրոնական հավատալիքները և պարզունակ արվեստը: Հավատալիքները իրերի, կենդանիների, բույսերի, երկնային մարմինների, բնության երևույթների և այլնի հետ կապված կրոնա-պաշտամունքային դրսևորումների համակարգ է: Երբեմն հավատալիքներ են համարվել պաշտամունքի առարկաները: Հավատալիքների առաջացման համար կարևոր նշանակություն են ունեցել բնության երևույթներն ու դրանց էության անբացատրելիությունը, բնակլիմայական առանձնահատկությունները, հասարակական կարգերը, սոցիալական պայմանները, սովորույթներն ու էթնիկական առանձնահատկությունները: Հավատալիքներին, պաշտամունքին առնչվող պատկերացումները սկսել են ձևավորվել հին քարի դարի մուստիերյան փուլի վերջում: Նախնական հավատալիքները վերաբերում են մարդկային հասարակության նախամշակութային շրջանին և աղերսվում են նախամարդու ամենապարզունակ աշխարհընկալմանը, որի համաձայն՝ տեսանելի աշխարհն ու առարկաները ենթակա են առարկայական անընդհատ կերպարանափոխումների (մետամորֆոզ): Հավատալիքների հետ կապված ծիսական արարողությունները բաղկացած են եղել հիմնականում նմանողական մոգական գործողություններից (անձրևաբերության համար միմյան վրա ջուր ցանել և այլն)՝ նպատակ ունենալով այդ կերպ բարերար ազդել բնության երևույթների վրա: Նույն ժամանակում ձևավորվում է մեռյալների ու նախնիների պաշտամունքը: Նախամարդու կյանքում նշանակալից դեր են ունեցել տոտեմիստական հավատալիքները, որոնց համաձայն բույսերը, կենդանիներն ու նրանց ոգիները կարող էին լինել մարդու կյանքի և կենսագործունեության հովանավորողները:

Ընտրելով տոտեմը մարդն իր հերթին խնամել ու պահպանել է նրան՝ ձգտելով շահել նրա բարյացակամությունը: Կենդանին կամ բույսը համարվել է անձեռնամխելի:

Կենդանապաշտական, բուսապաշտական հավատալիքի բազմաթիվ վերապրուկներ հայ ժողովրդի մեջ հարատևեցին մինչև 19-րդ դ.վերջը – 20-րդ դ. սկիզբը: Ըստ վասպուրականցիների, կենդանիները հասկանում են մարդկանց ներկան ու ապագան և այդ մասին հաղորդակցվում: Հայաստանի գրեթե բոլոր գավառներում պահպանվել են կանաչի, ծառի և այլ բույսերի պաշտամունքի տարրեր: Հնագույն հավատալիքների վերաբերյալ արժեքավոր ապացույցներ են պահպանվել նախնադարյան արվեստի հուշարձաններում: Հնագույն հավատալիքների մի մասը նվիրված է որսորդությանը: Այդ է ապացուցում ժայռապատկերներում, գոտիների և այլ առարկաների վրայի որսորդական տեսարանների խորհրդապաշտական վերարտադրությունը: Նախամարդու կրոնական մտածողության ձևերից էր նաև բնապաշտությունը, որի հետ կապված էին կախարդական հմայական բնության երևույթներին, երկնային մարմիններին երկրմագելու ծիսակատարությունները: Հայաստանի լեռնային մի շարք շրջաններում (Սյունիք, Արագած, Գեղամա լեռներ) հայտնաբերված ժայռանկարներում կան արեգակի, լուսնի, երկնային այլ մարմինների, կենդանիների (մեղու, այծ, ցուլ, ձի, օձ և այլն) պաշտամունքը հավերժացնող պատկերներ: Գեղամա լեռներում կան օձի, ձկան, մողեսի, եզան, գոմեշի և այլ կենդանիների տեսքով վիշապ կոչվող քարակոթողներ, որոնք խորհրդանշում են ջրի պաշտամունք: Ջրի, արեգակի, կրակի և այլ երևույթների հավատալիքների հետ են կապված խեցեգործական հնագույն առարկաների վրայի մի խումբ նախշեր (ալիքաձև, պարուրաձև, երկրաչափական և այլն) ու քանդակներ: Հայաստանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի բնակատեղիներում հաճախ հանդիպող քարե, կավե, հարթաքանդակ և ծավալային մասամբ՝ բուսական զարդաքանդակներով ու նախշերով կնոջ կերպարանքով (հաճախ՝ բազմադեմ) կուռքերը մարմնավորել են կին-մայր աստվածության գաղափարը կապված բեղմնավորմանը, պտղաբերությանը, սերունդների հարատևմանը վերաբերով հավատալիքներին: Պտղաբերություն են խորհրդանշել նաև ֆալլիկ արձանները, ձագերին սնող կենդանիների, բեղմնավորման հմայական գործողությունների գեղարվեստական լուծումները և այլն: Երկրագործական, անասնապահան

հավատալիքները արտահայտված են եզների, ձիերի և այլ կենդանիների արձանների և պատկերների միջոցով: Արեգակի, մասամբ նաև կայծակի պաշտամունքը վավերացնում են սկավառակաձև, ճառագայթաձև զարդերը, ոճավորված կեռ խաչերն ու մեդալիոնները: Հնագույն արվեստի մի շարք նմուշներ վերաբերում են երևակայական գերբնական էակների (վիշապասպան հերոսներ, աստվածներ և այլն) սնոտի հավատին: Բուսապաշտությանն են նվիրված կենաց կամ սրբազան ծառերի բազմաթիվ պատկերներ: Արձանագրությունների առանձին բնագրեր առնչվում են վերոհիշյալ հավատալիքներին, որոնց մի մասը հետագայում տեղ գնավ նաև հին հայկական կրոնում:: Հայ ժողովրդի տոտեմական հավատալիքներում տեղ են գտել եզը, ձին, ոչխարը, այծը, խոզը, շունը, կատուն, մուկը, գայլը, աղվեսը, արջը, հավը, աղավնին, ճնճղուկը, կռունկը, ծիծեռնակը, արտույտը, մրջյունը, օձը, գորտը, կրիան և այլ կենդանիներ: Տոտեմական, բնապաշտական, ոգեպաշտական հավատալիքների մի շարք վերապրուկներ, իրենց տարատեսակներով, պահպանվեցին մինչև 19-րդ դ. վերջը, 20-րդ դ. սկիզբը, արտահայտվելով ժողովրդական կրոնական տոնակատորությունների, ինչպես նաև ժողովրդի առօրյա կենսագործունեության մեջ: Հավատալիքների առանձին խումբ են կազմել գուշակությունները՝ կապված բնության երևույթների, կենդանիների կամ թռչունների գործողությունների, ծառերի սոսափյունի և այլնի հետ: Հնագույն հավատալիքների որոշ տարրեր շարունակում են գոյատևել:

2.2 Ծեսեր

Անձրևաբեր և անձրևախափան ծեսեր

Վաղնջական մշակույթի ընդերքում ձևավորվել են բնության անշունչ առարկաների, մարդկանց և կենդանիների փոխադարձ կերպարանափոխման ու ոգեղենացման հավատալիքները: Մինչև 20-րդ դ. սկզբները հայոց մեջ կենցաղավարում էին այդ պաշտամունքի հետքերը:

Անձրևաբեր և անձրևախափան ծեսերը, առաջանալով տոհմացեղային ժամանակներում, առնչվում են մթնոլորտային երևույթների պաշտամունքին: Բնության և հասարակության երկհակադրության, հատկապես ջրի տարերքի հետ է կապվում երկվորյակ աստվածությունների պաշտամունքը: Դրանց ավանդաբար

վերագրվում են եղանակի կարգավորման, տիեզերական կարգուկանոնի հաստատման պատկերացումներ: Այդ հավատալիքների լուսաբանումն ուղղակիորեն հարաբերվում է տվյալ ժողովրդի ծագման պայմանների, աշխարհագրական դիրքի, բնակլիմայական միջավայրի, էթնոմշակութային յուրաատկությունների հետ: Ծիսահմայական միջավայրին բնորոշ է տարբեր կենդանիների անձրևաբեր հատկանիշների վերագրումը՝ ցուլը, էշը, այծը, ոչխարը, եզը և այլն եղել են պաշտվող կենդանիներ:

Հնդեվրոպական և հայ կրոնաառասպելաբանական համակարգում ևս իրենց արտացոլումն են գտել համատիեզերական երևույթների ու պատկերացումների երկհակադիր ընկալումները (Հմմտ. բարու և չարի, աստվածայինի և դիվայինի, վերի և վարի (երկինք / երկիր), արականի և իգականի, տաքի և սառի, խոնավի և չորի, կյանքի և մահվան և այլ հակադրությունների հետ): Հայ ժողովրդական հավատքի առանցքն է կազմում բարի լույսի և մութ խավարի հակադրությունը:

Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի հակոտնյա բնույթն առավել տեսանելի է երկրագործական պաշտամունքի համալիրում: 12 կենդանակերպերը և աստղատուն ընդգրկող խմբերը՝հողագործների կարծիքով օժտված էին չար և բարի ուժերով՝: Այդ ուժերի հակամարտության արդյունքում ամպրոպային հսկան հաղթում է դևին (վիշապին), մարդկանց ուղարկում բարեբեր անձրև և ապա արեգակնային լույս, պտղավորման միջոցով ապահովում վերածնման գաղափարը, որը վիշապի սպանության ծիսական արարողության բուն նպատակն է:

՝Կապված երկինքը՝, գետի չորացած հունը կամ պապակված աղբյուրի ակը բացելու վիշապամարտի մոտիվը բնորոշ է ինչպես հայ ժողովրդական հեքիաթներին, այնպես էլ դյուցազնավեպին: Այս հայտնի մոտիվի հետ է առնչվում ՝տղամարդու հագուստ -կապուստով՝ կանանց կողմից չորացած գետի հունը ընթացքին հակառակ վարելը: Կարծում ենք հակառակ ուղղությունը կարելի է բացատրել ծեսի բուն նպատակը (ճանապարհը դեպի երկինք) գաղտնագրելու, իսկ տղամարդկանց արտաքինն ու հատկապես առնականության հատկանիշն ընդօրինակելը ջրային տարերքի աստվածուհուն գայթակղելու հանգամանքով:

Անձրևը ցանկալի է, քանի նպաստում է հողի արգասավորությանը, մինչդեռ անդադար անձրևը առաջադրում է ցանքատարածությունները աղետից փրկելու

տրամագծորեն հակառակ պահանջ՝ արև: Ուշագրավ է, որ եղանակը՝շրջելու՝ծեսերի ժամանակ՝դերակատարները՝գլխավորապես այրի կանայք ու դեռատի աղջիկներ էին, տղամարդիկ հանդիսատեսի կարգավիճակում էին, իսկ պառավ կանանց մասնակցությունը ցանկալի չէր: Այս հանգամանքը կարելի է բացատրել պառավների վերարտադրության կենսաբանական գործառույթի կորստով, չկենակցող այրիների ու աղջիկների մաքրությամբ, նրանց պտղաբերության հնարավորության և հողի արգասավորության աղերսներով: Ընդհանուր առմամբ, ծեսի մեջ կանանց՝մենաշնորհը՝դիտվում է իբրև վերապրուկ այն հեռավոր ժամանակների, երբ հողի մշակությամբ բացառապես կանայք էին զբաղվում:

Վանեցիների կարծիքով, իրենց ամբարած ցորենը թանկ վաճառելու նպատակով հացատերերը՝էշ մ ողջ - ողջ թաղած են՝, որն իբրև չար հմայքը կարող է երաշտ առաջ բերել: Սակայն ժողովուրդն ինչպես ամեն տեղ, այստեղ էլ ունի անձրև տեղացնելու կամ չտեղացնելու իր հմայքները: Եվ եթե էշին կենդանի թաղելով խափանվել է անձրևը, ապա՝պղնձացած երկնքեն անձրև՝ իջեցնելու համար բարեգուշակ նշան է համարվել էշի զռալն ու լիաշունչ օդ շնչելը:

Անձրևաբեր պաշտամունքի վերապրուկներից են շինծու պատերազմի միջոցով ավարած ոչխարի զենումն ու մեծ հանդեսով գլուխը գետը ձգելը: Օտարազգիների գերեզմաններից գաղտագողի գանձեր հանելն ու ջուր նետելը (որը մարդկային զոհ մատուցելու սովորության մնացուկներից է Հայաստանում), կանանց կողմից տղամարդկանց արտաքին հատկանիշներն ու զբաղմունքն ընդօրինակելը (փափախ դնելն ու տղամարդու հագուստ կրելը, սպառազինվելը, իբրև տղամարդու առնականության հատկանիշ շերեփն առջևից կախելը, կանանց կողմից գետի ընթացքին հակառակ վար անելը, եզներին որպես հոտաղ քշելն ու աղմուկով հայհոյելը և այլն):

Բանահյուսական և ազգագրական նյութը վկայում է այն անձրևաբեր ծեսերի ու երգերի բազմազանության մասին, որոնք առնչվում են Նուրինի հետ: Անձրևաբեր և. անձրևախափան երգերը, լինելով հակադիր նշանակությամբ ծիսական երգեր, միաժամանակ ունեն որոշակի ընդհանրություններ: Փորձենք համեմատել Ա. Ղազիյանի կողմից Արցախում գրառված

անձրևախափան Գոդիի և Տ. Նավասարդյանի հրատարակած անձրևաբեր Նուրինի փոփոխակներից մեկը: Շրջայցերի ժամանակ ծույլ ու անբան Գոդիի ՝ծվծվոցից, կրթկթոցից՝ հոգնած ծիսական թափորը, երգի առաջին տողերից սկսած անիծում է ալարկոտ Գոդիին անդադար անձրևը խափանող իր կախարդական հնարքները չգործադրելու համար: Գոդին իգական սեռին պատկանող անձրևախափան խրտվիլակ է (անեծքն է հուշում Գոդիի սեռը ՝Մարդը մեռած, այ Գոդի, տղան մեռած, այ Գոդի՝ և երգի ՝փուշի տվեքյ վարսը քսիմ՝ տողը): Արարողության մասնակիցները դժգոհելով Գոդիից ՝ցորտ-ցորտ ըխպրեքյ, կարմիր արև ու կանաչ սարեր՝ են ուզում տիրոջից: Տեղին է փաստել, որ թեև Գոդին ընդունված է համարել անձրևախափան երգ, սակայն Գոդիի Արցախում գրառված մեկ այլ տարբերակում նույն ծիսական տիկնիկից ժողովուրդն արևի փոխարեն անձրև է հայցում ՝Թոռն ըմ օղում աշխարքը թրջի՝, որն էլ վկայում է Գոդիի երկակի և՛ անձրևախափան, և՛ անձրևաբեր գործառույթի մասին:

Ի հակադրություն Գոդիի անձրևաբեր Նուրինին ուղղված երգը սկսվում է Հուրի-փերի տիկնիկի փառաբանությամբ: Ծիսական շրջիկ խումբը ժողովրդի փափագը ամփոփում է հետևյալ աստվածահաճո տողերում.

Բարով աստծով անձրև գա.

Ձեր Հոր արտեր կանաչնա.

Գոդիի նման Նուրինը նույնպես իգական սեռի հատկանիշներ ունի ՝Եղ բերեք մաղը քսենք՝: Մամա - Չթթիկը, Չիչի-Մաման և Չամչա Խաթունը Նուրինի տարբեր անուններն են տատ, մեծ մայր նշանակությամբ: Փաստորեն և՛ Գոդին, և՛ Ն ուրինը մարդակերպ տիկնիկներ են և հատկապես Նուրինը (փառաբանված լինելու շնորհիվ) կարող էր միջնորդ դիտվել մարդկանց և աստվածների միջև: Անձրևաբեր և անձրևախափան զորությամբ օժտված ժայռերը բարձրանալու մոգարգելքը (տաբուն), անտարակույս, հուշում է Նուրինի աստվածային ծագման մասին: Նախնական պատկերացումների համաձայն ժայռը (սարը) երկինքն ու երկիրը կապող միջանկյալ օղակ է, և սարերի ու ժայռերի վրա էին բնակվում մի շարք հնդեվրոպական ժողովուրդների աստվածներ ու աստվածուհիներ ևս: Ծիսական թափորը ուղիներ է որոնում ճոլին ծովից դուրս բերելու համար և պատահական չէ, որ դիմում է պարանի օգնությանը.

Քյանգիր պերեքյ տյուս օնինք,

Չուվան պերեքյ կցան տանք:

՝Քյանգիրն ու չուվանը՝, ըստ երևույթին, խորհրդանշում են պարանի հմայական հատկությունը, որին հայոց մեջ վերապահված է չար ուժերին հալածելու ծիսական գործառույթ: ՝Հայերեն գավառական բառարանում՞ ճոլը համարվում է ղարաբաղյան անհայտ իմաստով բառ, որը գործածվել է ճոլի ծիսական երգում: Ճոլի ծիսական երգի անձրևաբեր, թե անձրևախափան լինելու վերաբերյալ գոյություն ունեն տարբեր աղբյուրներ և գիտական տարբեր կարծիքներ.

1. Ըստ Գր. Ղափանցյանի անձրևաբեր ծիսական ճոլի երգը ջրի աստվածության հնագույն պաշտամունքի հիշողությունն է պահպանված Ղարաբաղի հայոց կենցաղում:

2. Բանահավաք Կ. Մելիք - Շահնազարյանը ճոլին համարում է անձրևաբեր երգ, որը կատարվել է երաշտ տարին աստծո գութը շարժելու և անձրև բերելու նպատակով:

3. ճոլիի անձրևաբեր նմուշներ են պահպանվում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում:

4. Էմինյան ազգագրական ժողովածուն ճոլին նույնացնում է անձրևաբեր Նուրինի և նրա տարբերակների հետ իբրև նմուշ մատնացույց անելով ՝Բյուրակնում՞ լույս տեսած անձրևաբեր ՝Պուպլատըկին՞ երգը:

5. Վերոհիշյալ աղբյուրի հետ համերաշխ է նաև Մ. Աբեղյանը« ՝Նուրինը կոչվում է նայելով բարբառներին՝ ճոլի՞:

Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի վերլուծական ընդհանուր քննությունն ամփոփելով ասենք, որ մթնոլորտային երևույթների տարերային դրսևորումները հնագույն ժամանակներից հայոց մեջ ձևավորել են պաշտամունքային արարողություններ ու ծիսական երգեր, որոնց օգնությամբ ժողովուրդը ձգտել է վերականգնել բնության ու հասարակության ներդաշնակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Հնագույն շրջանի մշակույթը Հայկական լեռնաշխարհում» թեման եկա այն եզրակացության, որ հազարամյակների հարուստ պատմություն ունեցող հայ ժողովուրդը համաշխարհային քաղաքակրթության մեջ իր ծանրակշիռ տեղն ու դերն ունի: Հայ ժողովուրդի պատմական ուղին համաքայլ է եղել մարդկային հասարակության անցած քաղաքակրթության ընթացքին:

Հայ ժողովուրդը շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, պահպանել ու զարգացրել է իր ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրը և գոյակերպը:

Մարդը Հայկական լեռնաշխարհում բնակություն է հաստատել վաղնջական ժամանակներից: Հայկական լեռնաշխարհում բնակվել են տարբեր ցեղախմբեր՝ հայերի հեռավոր նախնիները, թողնելով պալեոլիթից մինչև երկաթի վաղագույն դարաշրջանների բազմաթիվ հուշարձաններ՝ ոսկրե, քարե, մետաղե գործիքներ, զենքեր, հնագույն բնակատեղիներ ու կացարաններ, կարասային ու քարարկղային դամբարաններ, մենհիրներ, կրոմլեխներ ու դոլմեններ, պաշտամունքային այլևայլ կոթողներ:

Հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են բավականին մեծ թվով նյութական արժեքներ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել հնագույն շրջանի, հնագույն մարդու ապրելակերպի և աշխարհընկալման մասին:

Հայաստանի Պատմության թանգարանում ցուցադրվում է ավելի քան 100 տարի առաջ սկիզբ առած և մինչև օրս Հայաստանի տարածքում շարունակվող հնագիտական պեղումներից հայտնաբերված շուրջ 1000 գտածոների բացառիկ մի ընտրանի. աշխատանքի գործիքներ, կենցաղի առարկաներ, ծիսական անոթներ, զենքերի և սպառազինության բազմապիսի տեսակներ, փոխադրամիջոցների պատմության հնագույն ապացույցներ՝ փայտյա կառքեր:

Հնագույն մարդու բնակատեղիների, կենցաղի մասին պատկերացում են տալիս հնագույն քարայր-կացարանները՝ Արենի-1 քարանձավը, Հին Խնձորեսկը և այլն:

Հայաստանում քարի-բրոնզի դարերի նյութական մշակույթի հուշարձանների մեջ կարևոր տեղ են գրավում մի շարք վայրերից գտնված ժայռապատկերները, որոնք

հաճախ հանդիպում են Գեղամա լեռների ոչ խոր լեռնային հովիտներում, Արագածի բարձրադիր լանջերին և քարայրներում, Սյունյաց լեռներում (Սիսիան):

Հայաստանի տարածքում գտնվող հնագույն շրջանի ամենաարժեքավոր հուշարձանը Քարահունջը կամ Զորաց քարերը, վկայում է, որ մեր տարածքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից և հնագույն մշակույթի կարևոր կենտրոն է: Հուշարձանը բաղկացած է մենհիրներից՝ մենաքարերից, որոնք ուղղահայաց կանգնած քարեր են: Մենհիրները հանդիպում են առանձին կամ կրոմլեխների կազմում:

Կա վարկած, որ Զորաց քարերն իրենից ներկայացնում է հնագույն աստղադիտարան՝ նախատեսված երկնային լուսատուների շարժը դիտելու և ժամանակը չափելու համար, իսկ քարերի վրա բացված անցքերը նախատեսված են տարբեր բարձրություններից, որոշակի կետերից երկնային լուսատուների շարժը և դիրքը հետևելու համար: Մեծամորը, Շենգավիթը, Լճաշենը, Լոռի բերդը մեր պատմության և մշակույթի կարևոր դրսևորումներն են:

Նախնադարյան ժամանակներից մեզ հասած նյութական մշակութի մնացորդները, ինչպես նաև հայ ժողովրդական բանահյուսության ու ազգագրության հարուստ տվյալները հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացումներ կազմել Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների գաղափարական պատկերացումների, հավատալիքների և պաշտամունքի մասին: Վաղնջական մշակույթի ընդերքում ձևավորվել են բնության անշունչ առարկաների, մարդկանց և կենդանիների փոխադարձ կերպարանափոխման ու ոգեղենացման հավատալիքները: Համպատասխանելով ժողովրդի աշխարհայացքի, ըմբռնումների, կենցաղի հարահոսքին, այն երբեք չի կորցրել իր մեծ դերն ու ազդեցությունը մարդկային կյանքի, հոգեբանության ու մտածելակերպի վրա:

Աշխատանքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ Հայկական լեռնաշխարհը եղել է մարդու բնակության հնագույն օջախներից մեկը, եթե ոչ առաջինը:

Այսպիսով, ուսումնասիրելով հնագույն շրջանի մշակույթը առաջարկում եմ /զբոսաշրջության զարգացման համար/.

1. Այցելություն Հայաստանի պատմության, Երևանի պատմության, Հայաստանի Ազգագրության, Սիսիանի Ն.Ադոնցի անվան պատմության թանգարաններ

2. Այցելություն դեպի հնավայրեր Մեծամոր, Զորաց քարեր, Լոռի բերդ

3. Կազմակերպել քայլաարշավներ դեպի բաց թանագարաններ՝ Ուղատասար, Գեղամա լեռներ, Արագած լեռ

4. Առաջարկում եմ հմայիլների, ժայռապատկերների պատրաստում թրծակավից ու ջնարակում: Պատրաստման նկարագրություն, պատրաստվող իրի նշանակության ու խորհրդի մեկնաբանում և վաճառք:

5. Վիրտուալ թանգարանի բացում

6. Ջրի պաշտամունքին նվիրված առաջարկում եմ Արագած լեռան լանջերին կազմակերպել վիշապի մասին հեքիաթների մոտիվների հիման վրա բեմականացում:

7. Ներկայացում ՝ ՝Անձրևաբեր և անձրևախափան ծեսեր՝ թեմայով:

8. Թոնրի և օջախի պաշտամունքին նվիրված ծիսական միջոցառում ավանդական հայկական թոնրատանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայկ Ավետիսյան ,՝Հայոց պատմություն՝, Երևան 2009
2. Վլադիմիր Բարխուդարյան և ուրիշներ,՝Հայոց պատմություն՝, Երևան 2005
3. Ստեփան Լիսիցյան ,՝Զանգեզուրի հայերը՝, Երևան 1969
4. Մովսես Խորենացի ,՝Հայոց պատմություն՝, ԵՊՀ,Երևան-1981
5. Վարազդատ Հարությունյան, ՝Հայաստանի ճարտարապետության պատմությունը՝, Երևան 1992
6. Աշոտ Մելքոնյան և ուրիշներ,՝Հայոց պատմություն՝, Երևան 2009
7. Գոհար Մալխասյան, ՝Զբոսաշրջությունը Հայաստանում՝, Երևան 2011
8. Խաչիկ Սամուելյան ,՝Հին Հայաստանի կուլտուրան՝, Երևան 1941
9. Էդվարդ Սարգսյան,՝Քարանձավները բացում են իրենց գաղտնիքները՝, Երևան-1989
10. Սանդրո Սարդարյան ,՝Ժայռապատկերներ՝, Երևան 2010
11. Հռիփսիմե Սիմոնյան ,՝Սա մեր երկիրն է Հայաստան՝, Երևան 2008
12. Ռաֆֆի,՝Խամսայի մելիքությունները՝,հ.10 Երևան 1964
13. Ալեքսանդր Վարպետյան,՝Ովքեր են ի վերջոյ արիացիները՝, Երևան 1990
14. Հայկական սովետական Հանրագիտարան (ՀՍՀ)
15. Հայկական համառոտ հանրագիտարան (ՀՀՀ), հ.I, Երևան,1990
16. Հայեցի ապրումներ
17. Հայ ժողովրդական հեքիաթներ,՝Արևիկ՝2004
18. Հայաստանի հրաշալիքները , Երևան, 2000

Կայքեր

http://www.google.am

http://hushardzan.am/category/lori-berd/

http://www.historymuseum.am/archsites/?lang=arm